

ԵՐԵՎԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (չացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿԻ» խմբագրութիւնը յայտնում է, որ կիրակի, դեկտեմբերի 22 ին,

Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ո Ւ

մահվան տասնամեակի առիթով Խոջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը մատուցվի պատարագ, ապա գերեզմանի վրա կը կատարվի հոգեհանգիստը և կը բացվի մահարձանը: Պատարագը կը սկսվի առաւօտեան ժամի 10-ին, իսկ հոգեհանգիստը ճիշտ 12-ին:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Գրիգոր Արծրունու մահարձանը. Տասնամեակի առաջ.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վահան Նալբանդեան. Գրիգոր Արծրունու մահարձանը. Մաքի նահատակները. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տաւր տարի:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՄԱՀԱՐՁԱՆԸ

Այսօր, դեկտեմբերի 19-ին, լրանում է Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակը: Առաջիկայ կիրակի օր, դեկտեմբերի 22-ին, Արծրունու գերեզմանի վրա կը կատարվի հոգեհանգիստ Խոջիվանքի գերեզմանատանը:

Գրիգոր Արծրունու գերեզմանի վրա դրված է մահարձան, որ համապատասխանում է հանգուցեալի իր կեանքի ժամանակ յայտնած ցանկութեան: Նա ներկայացնում է մի ժայռ, որի վրա յղկված է մի տեղ և այնտեղ փորագրված Արծրունու անուն-ազգանունը իր սեփական ձեռագրի նմանողութեամբ: Մահարձանի պատուանդանը նոյն ժայռից է. նա յղկված է և փայլում է իբրև մոյգ մարմարի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՍԸ ՏԱՐԻ

I

Ժամանակը թևակոխում է, ժամանակը թռչում է: Տաւր տարի... Արդէն տաւր տարի անցաւ: Որքան արագ:

Ինչ թւում է թէ դեռ երէկ էր այն օրը, երբ մի անօրինակ ցնցում տարածվեց մեր մէջ: Ես չեմ մոռացել այդ օրը, մինչև իսկ եղանակը, ժամը:

Դեկտեմբերի մի պարզ օր. Արեգակը մայր էր մտնում, կարմիր լոյսեր թափելով ձիւնապատ տարածութիւնների վրա: Հալոց չը կայ. ջինջ երկրի տակ տիրում է լեռնային ձմեռվայ ցուրտը: Կարծես այդ ցրտութիւնն է, որ այնպէս բարակ, նոսր մշուշի նման բարձրացած է ձիւներից վեր, կապուտին է տալիս հեռուում:

Ինչ բերում են հեռագիր. Բաց եմ անում, և ինչ տողեր:

«Մեզ հարուածեց մեծ դժբախտութիւնը. այլ ևս չը կայ մեր ուսուցիչը. Գրիգոր Արծրունին վախճանվեց»:

Այնուհետև իմ ընկերի ստորագրութիւնը: Ո՛չ մի կասկած, տարակուսանքի ոչ մի առիթ: Շտապով դուրս եմ գալիս տանից, տարածում եմ սարսափելի տխուր լուրը: Շուտով երկրորդ հեռագիրն է հասնում: Մի և նոյն բովեր...

Միմեջ: Հաւաքված ենք մեր մի ընկերի աման: Շատուր ենք, մի մեծ չրջան: Կորացրած գլուխներ, ծանր լուռութիւն,—կատարեալ

Մահարձանի բացումը տեղի կունենայ կիրակի, դեկտեմբերի 22-ին:

ՏԱՄԱՄԵՆԻ ԱՌԱՋ

Լրացաւ տաւր տարի այն տխուր և ծանր օրից, երբ անսպասելի մահը վերջ գրեց «Մշակի» տաղանդաւոր հիմնադիր Գրիգոր Արծրունու բեղմնաւոր կեանքին: 1892 թ-ի դեկտեմբերի 19-ը խոր արձագանք գտաւ Հայ հասարակութեան սրտում: Հասարակութիւնը զգաց, որ նրանից հեռացաւ նրա անկեղծ, անկաշառ և հարազատ զաւակը, որը իր բոլոր մտաւոր և բարոյական ոյժերով նուիրել էր այդ հասարակութեան ընդարձակ զարգացմանը: Կորուստը մեծ էր և հասարակութեան վիշտը խոր:

Գաղափարական և քաղաքակրթական այն գործը, որին նուիրել էր իրան Գրիգոր Արծրունին, ստեղծել էր բարեկամների և գործակիցների շարքեր կեանքի զանազան խաւերում: Այդ գործը նուիրաւոր էր և չը պէտք է կորչէր: Եւ նա չը կորաւ:

Բոլոր այն անձինք, որոնք իրանց ձգտումներով և իրանց զաղափարներով յաւրած էին անմահ հրապարակախօսի գործունէութեան, իրանց համակրութեամբ,

սգատուն: Գալիս են նորերը, լավում են հեկեկանքներ: Կարծ, խեղդված հարցեր են լուսվում, պատասխաններ չեն տրվում: Մի և նոյն չէ թէ ինչպէս և ինչու: Արծրունին այլ ևս չը կայ: Անա իրողութիւնը, ճնշող, լռեցնող, մշտնջերի մէջ թաղող իրողութիւնը:

Ենթադրվում է, որ անհնար է Նախ և առաջ հեռագիր ենք ուղարկում «Մշակին», այդ մեր սիրելի, թանկագին այրին:

Ձեռն պատմի մեր հեռագրի բովանդակութիւնը: Երեք օրից յետոյ Թիֆլիսում ես տեսայ հեռագիրների այն տարաբնույթ, որ տեղում էր աշխարհի չորս կողմից: Եւ իմացայ, որ դեկտեմբերի 19-ի երկուցիւն Շուշում, մեր ընկերի տանը, սգաւոր հեռագրի շուրջը բոլորած մեր խումբը հայութեան սրտի մի փոքրիկ մասն էր կազմում, որ նա էլ համակրված էր այն զգացմունքով, ինչ այդ րօպէին ամբողջ սիրտն էր գցում: Մի ինչ-որ խոշոր բան պոկվեց, պակասեց մեզանից, ինչ-որ մի ցուրտ, անհալի մեծ, վախեցնող դատարկութիւն գոյացաւ մեզանում: Սա միայն մեր հեռագրի բովանդակութիւնը չէր. սա հեռագրական տարափի լեզուն էր: Ամեն տեղ մի և նոյնը:

Հեռագիրների հետ մեր երկրի բոլոր անկիւններից մարդիկ ուղևորվեցին դէպի Թիֆլիս՝ Արծրունու դիակին երկրպագելու համար: Թիֆլիսում զարմացած էին. ինչպէս եկան, ժամանակին հասան այդքան մարդիկ՝ հասարակութիւնների, դասակարգերի, հիմնարկութիւնների վիշտը, սուգը անձամբ ներկայացնելու համար:

Ես գիտեմ այդ հարցի պատասխանը: Ես էլ երկը եմ այդ ուխտագնացութեան ճանապարհին և տեսել եմ, թէ ինչն էր այդպէս տանում մարդկանց:

Շուշուց պատգամաւոր էինք գնում ես և

գործակցութեամբ և խրատականութեամբ նպաստեցին, որ Գրիգոր Արծրունու թողած թանգազին ժառանգութիւնը, «Մշակ» լրագիրը, կարողանայ շարունակել այն գերը, որ նրա համար ծրագրել էր նրա հիմնադիրը:

Անցաւ տաւր տարի: Այսօր նոյնպէս, ինչպէս և տաւր տարի արանից առաջ, Արծրունու հիմնած լրագիրը, հաւատարիմ իր ամբողջ անցեալին, միայն մի բան կարող է ուղղել նրա յիշատակին, այն է՝ անշեղ հետեւել ծրագրած ուղղութեան, առաջ ընթանալ անշեղի եռանդով և անընկճելի ոգևորութեամբ, հաւատալով, որ լուսաւոր գաղափարները և լայն կուլտուրական հասարակութիւնը ունեն փրկարար ոյժ և նրանք պէտք է վերանորոգեն և թարմացնեն կեանքը, որ ճահճացած է իր զարաւոր խաւար անցեալի աղբեղութեան տակ:

Գրիգոր Արծրունին ընդգծում էր ամեն դէպքում անհատի, ընտանիքի, համայնքի և պետութեան մէջ եղած ներքին սերտ կապը, նրանց յատուկ պարտաւորութիւնները և կոչումները: Երբ անհատը իր նախաձեռնող և ստեղծագործող ոյժով, իր քաղաքացիական պարտաճանաչութեան գիտակցութեամբ և իր հասարակական ձգտումների զգացմունքով մի կողմից, իսկ ընտանիքը, համայնքը և պետութիւնը իրանց կազմակերպող, շարժապող, և համբարշտութիւն առաջացնող ոյժով միւս կողմից սկսում են գործել և կապվում են միասին, այն ժամանակ նրանք նպաստում են, որ առաջադիմութիւնը լինի բազմակողմանի և կատարեալ, որ կեանքի մէջ հաստատվի հոգ ներդաշնակ զարգացման և հանրային բարօրութեան համար:

Անցաւ տաւր տարի: Այն, ինչ որ տաւր տարի առաջ մենք ուխտել էինք Գրիգոր Արծրունու թարմ յերեզմանի առաջ, նոյնը այսօր անում ենք: Նրա մահարձանի առաջ, որ դրված է նրա գերեզմանի վրա տասնամեակի լրանալու տարւում:

Լեռն Սարգսեանը: Ամպամած, անլոյս մի օր էր, երբ պատառնալիս սպալակը իջեցնում էր մեզ Շուշու ժայռերի գլխից: Կէսօրն անցել էր, իսկ մենք միւս օրը վաղ առաւօտեան պիտի հասնէինք Եւլախ կայարանով անցնող գնացքին:

Ամբողջ գիշերը ճանապարհ կորեցինք: Սարսափելի մութ, ցուրտ, երկիւղալի գիշեր: Ես իշուս եմ մի այսպիսի ժամ: Դեռ կէս վերստ չէ հեռացած պատառնալի իջնանից, մենք մի այնպիսի թանձր խաւարի մէջ ընկանք, որ ուղղակի չլինեցինք: Ձեռն երևում ձիւները. չէ երևում նոյն իսկ մեր առջևում նստած սայլապանը: Դարաբաղի տափարակներում ձիւնը չէ կանգնում: Խաւարի մէջ սպիտակութեան և ոչ մի նշան: Մենք ստիպված եղանք կանգնեցնել սայլակը: Ի՞նչ էր պատահել: Այն, որ երկուսիս մէջ մի յամառ միտք էր մտել, որ համարեա անախալական էր թւում: Մենք չէինք որ շարժվում ենք, բայց դէպի ուր: Դեռ թւում է թէ դէպի յետ, թւում է թէ վերադառնում ենք մեր եկած ճանապարհով: Հարցնում ենք սայլապանին՝ դիտէ՞ նա որ մենք դէպի երկաթ թուղին ենք գնում: Նա մեզ չէ էլ պատասխանում: և մենք դարձեալ շարժվում ենք անյայտութեան մէջ, չը կարողանալով որոշել՝ դէպի առաջ, թէ դէպի յետ...

Խաւարը, սակայն, ոչինչ կը լինէր, եթէ ամբողջովին տողորված չը լինէր: Դարաբաղի պատմական աւազակութիւնների անով: Այս տափարակներում սպանութիւնը, կողոպուտը ամենատարածական բաներն էին: Չորս կողմում ոչ մի շարժում, ոչ մի ծուլում: Կարծես երկինքն ու երկիրն ամեն ինչ խնամքով պատրաստել են խաւարի հերոսների արիւնքն առհասարակողեցնելու համար: Գիշերվայ ժամի մէկն էր: Իսկ մեր մտքով անգամ չէր անցնում, թէ կա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Մի լակոնական հեռագիր, երէկ, չորեքշաբթի, դեկտեմբերի 18-ին, գուժեց մեզ էջմիածնից մեր լրագրի աշխատակից երիտասարդ Վահան Նալբանդեանի ցաւալի և վաղաժամ մահը:

Այդ գոյժը, որ մեզ հասաւ հեռագրի այս խօսքերով՝ «Երէկ երեկոյեան վախճանվեց Նալբանդեան», վերին աստիճանի անակնկալ էր մեր խմբագրութեան համար, որովհետև մենք միշտ ևս այդ ոչ մի տեղեկութիւն չէինք ստացել Նալբանդեանի հիւանդութեան մասին:

Ծաւալի և զգալի կորուստ հայ մամուլի, գրականութեան և հասարակութեան համար, որովհետև յանձին երիտասարդ Նալբանդեանի հայ մամուլը կորցնում է մի գործունէալ, արդիւնաւէտ աշխատակից, հայ գրականութիւնը մի ժիւղի, պատրաստված և զինուորված եւրօպական լուրջ գիտութեամբ, իսկ հայ հասարակութիւնը՝ մի առաջադիմական ոյժ և մաքառող: Մասնաւորապէս զգալի է կորուստը «Մշակի» համար, որովհետև Նալբանդեանի պէս պատրաստված, կրթված գրական ոյժ մեր երիտասարդների մէջ շատ քիչ ունենք և, անկասկած, նա ապագայում պէտք է լինէր մի բեղմնաւոր աշխատակից:

Վահան Նալբանդեան ծնվել է Վանում 1876 թ-ի նոյեմբերի 10-ին, ուրեմն նա մեռաւ շատ ծաղիկ հասակում, 26 տարեկան: Սկզբնական ուսումը նա ստացաւ Վանի հայոց դպրոցում, իսկ ապա տեղափոխվելով ծնողների հետ Թիֆլիս, մոտաւ Ներսիսեան դպրոցը 1888 թ-ին, 12 տարեկան հասակում և աւարտեց այդտեղ ուսումը 1894-ին, իբրեւ ամենաառաջադէմ աշակերտներից մինը: Նոյն թ-ին նա գնաց Գերմանիա բարձր ուսումնական Թիֆլիսի Բաժնեկց եկեղեցու նպաստով և հաստատվեց գլխաւորապէս Լայպզիգում, ուր պարապելով էր գլխաւորապէս գրական, պատմական և փիլիսոփայական առարկաներով: Գերմանիայից

ընկի է կանգ առնել լուսաւոր ու տաք իջնաններից մէկում, սպասել առաւօտին:

Մի կարծէք թէ այս բոլորը ես պատմում եմ մեր առանձին մի քաղցրութիւնը, վերմոտանդութիւնը ցոյց տալու համար: Ոչինչ պարծանք չը կար մեզ համար: Ամօթ էլ կը լինէր մեզ համար ընկճվել այդ ծանր ու ցուրտ գիշերից: Մեր առջևից, բաւական հեռու մեզանից, գնում էր Շուշու ամենապարզելի տիկիւններից մէկը: Նա էլ պատգամաւոր էր, շտապում էր օր առաջ հասնել Թիֆլիս: Եւ նա համարեա մենակ էր, նրա հետ էր միայն նրա որդին, մի պատանի ռէպրտալ: Իւրաքանչիւր իշխանութիւնը իմանում էինք, որ տիկնոջ կողքը նոր ճանապարհ ընկաւ: Եւ մենք պիտի կանգ առնէինք:

Ո՛չ, ծրուից սառած, կուչ եկած, չըջապատող խաւարից ու աւազակների երկիւղից պաշարված մենք խօսում էինք անդադար, խօսում էինք չը ջնջելու համար, խօսում էինք այն հանգուցեալի մասին, որ շուշեցի տիկնոջը, մեզ տանում էր այն անկեղծ, խաւար, ահաւոր տափարակներով...

Առաւօտից մօտ անձրև սկսվեց և մեծ ծեծեց մինչև Եւլախ կայարանը: Անքուն, սառած, թրջված ու ջարդված մենք մտնում ենք լուրջ զալի զանիւն: Ձեռք ուշացել: Շուշեցի տիկնոջը վրա դէմք չէ մնացել. ամբողջ գիշերը նա աչք չէ փակել, բայց և այնպէս, ծուլութիւն, գանգատ չը կայ: Երջանիկ է նա, որ հասել է Բայց եթէ սառն կերպով դատէինք, ինչ կարիք կար այսքան շտապելու, թաղումը դեռ երեք օրից պիտի լինէր:

Բանը թաղումը չէր,—ես չուտով զգացի այդ թաղումը կարող էր դեռ էլ ուշ լինել, և սակայն գնացողները շտապում էին, ինչպէս էին շտապում:

Շուշուկառը մեզ դուրս բերեց զաւառի ան-

նա շարունակ թղթակցում էր «Մշակ»-ին Աւարտելով բարձր ուսումը, նա վերադարձաւ Թիֆլիս 1901 թվականի սկզբին և վճռեց անձնատուր լինել գրականութեան ու մանկավարժութեան նա աշխատակցում էր «Մշակին», որտեղ, ի միջի այլոց, գրեց մի գեղեցիկ և լուրջ ուսումնասիրութիւն Դուրեանի մասին և մի քանի յօդուածներ եւրոպական գրականութեան մասին: Բացի դրանից, նա անցել տարի վարում էր «Մշակի» թատրոնական թէյէնդիայի բաժինը, որի մէջ աշխատում էր ծանօթացնել հայ հասարակութիւնը եւրոպական թատրոնական նոր գրականութեան բովանդակութեան հետ: Նա աշխատակցում էր և «Մուրճ» ամսագրին, որտեղ գրեց մի մեծ ուսումնասիրութիւն Հինգիսի Իրանի մասին, և մատենագրական տեսութիւններ: Պէտք է յիշենք և նրա գերմաներէն շարադրութիւնը Լէօպոլդ Ֆոն Բանկէի մասին, որ այս տարի հրատարակւեց Լայպցիգում «Leopold von Ranke's Bildungsjahre und Geschichtsauffassung» վերնագրով: Այս տարի սկսեցին տպւոյն նա հրատարակել Էլմիածնի Գէորգեան ձեռնարանը, իբրեւ գրականութեան ուսուցիչ և մտադիր էր մի քանի ուսումնասիրութիւններ կատարել հայոց գրականութեան վերաբերեալ:

Եւ այդպիսի մի պատրաստութեամբ, լուրջ գրական գործող ինքնուր է այսօր գերեզման, տա՛նելով իր հետ իր սրտում վաղուց փայփայած իդէալը: Եւ այդպիսի ոյժից զրկւում է այսօր հայ գրական աշխարհը և մամուլը, որ առանց այն էլ շատ հարուստ չէ գործերով, մանաւանդ եւրոպական գիտութեամբ օժտված գործերով:

Կարճ եղաւ Վ. Նալբանդեանի կենսւոյ, բայց իր այդ կարճ կենսւոյն ևս նա կարողացաւ գցել իր լուսնի հայ գրականութեան աղքատ գանձանակի մէջ և հատուցանել իր պարտքը հայ հասարակութեան, իբրեւ նրա պարտաճանաչ անդամ:

«Մշակի» խմբագրութիւնը իր խորին և անկեղծ ցաւակցութեամբ է յայտնում վաղաթառում երիտասարդ գրողի դժբաղդ ծնունդներին:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՆԻՆԻ ՄԱՇԱՐԱԶՆԵՐ

Գրիգոր Արծրունիի գեղարուեստաւէր էր: Երաժշտութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն չափ սիրում և հասկանում էր: Գեղեցիկ գրականութիւն և բնական արուեստ նոյնպէս սիրելի էին նրա համար: Գիտութեան և արուեստների մասին կանօնաւոր գաղափար ունէր, նա աշխարհ տեսած և շատ բան ուսումնասիրած ամառ էր: Բացի այդ, ունէր նաև գեղեցիկ ճաշակ: Յիշում եմ ինչպէս մի անգամ, երևի ուրախ տրամադրութեան միջոցին, մի վերին աստիճանի աշող կարիկատուրա էր նկարել և մի բարեկամի ձեռքով նուէր ուղարկել ինձ: Այդ բանը ներկայացնում էր

ձկութիւնից, աւելի լայն աշխարհի մէջ մորցրեց: Եւ մինչ տեսանք, թէ ինչ է արել Արծրունու մանր այդ աշխարհում: Բազում պատգամաւորները պատմում են մի չափ սրտայոյզ ցոյցերի մասին: Ծանապարհին նոր նոր մարդիկ են մտնում վազոնները և պատմում են նոր բաներ ուրիշ տեղերի մասին:

Ամեն տեղ սուգ է...

II

Մուժ էր, երբ մտանք Թիֆլիս: Ի՞նչ կար պատեղ: Հիւրանոցի ծառային իսկոյն ուղարկեցինք լրագրիչներ գնելու: Երկու թէ երեք օրվայ լրագրիչներ էին թափված մեր առջև: Ամեն տեղ Արծրունի և Արծրունի: Զէր կարելի առանց արտասուքների կարգաւ յօդուածները, լուրերը: Ի՞նչ գեղեցիկ էր գրում Միլիտանի «Кавказъ»-ը: «Тифлисский Листок»-ի առաջնորդը, «Новое Обозрѣніе»-ի բանասիրականը ողբում էին հայոց մեծ կորուստը: Հրատարակվել էր և «Մշակը», առաջինը Արծրունուց յետոյ, ամբողջովին արտասուք, ամբողջովին իր հերոս խմբագրի յիշատակներով լցված:

Առաւօտեան մենք խմբագրատան էինք: Յայտնեցինք մեր վիշտն ու ցաւակցութիւնը, մտանք փողերիկ դահլիճը: Դաշաղի մէջ զրկված էր Արծրունին: Համբուրեցի այն յիւտ, այժմ, աւաղ, ցուրտ ձեռքը, որ ամբողջ քան տարի «Մշակ» էր տուել մեզ: Այժմ էլ իր այդ ձեռքում նա պահում էր իր «Մշակի» վերջին համարը...

Այստեղ, այս անշուք սենեակումս էր, երեք ու կէս տարի առաջ, երբ ես առաջին անգամ տեսայ Արծրունուն: Նա ինձ հիացրեց իր սիրալիք ընդունելութեամբ: չը դիտէր ինչ անէ, որ իր գաւառական աշխատակցի համար հաճելի լինեն այն մի քանի օրերը, որ նա պիտի

հանրածանօթ մի տիպ, որը տեսնելուն պէս չը կարողացայ ծիծաղալ զապր:

Երբ անձամբ հանդիպեցի իրան և յայտնեցի զարմանքս իր նկարչական շնորհքի ստիճակին, նա ինձ շատ բաներ պատմեց իր կենսւոյց: Ի միջի այլոց ասաց նա, որ մի ժամանակ, ի հարկէ երիտասարդ հասակում, այն աստիճան նուիրվել էր նկարչութեան, որ մտադրվել էր նկարիչ դառնալ: Խօսքը բացվեց ճարտարապետութեան և քանդակագործութեան մասին և երբ ես խօսեցի մեր ժողովրդի մէջ ճաշակի բացակայութեան մասին, օրինակ բերելով մանրածանրերը, որոնք լաւ քարից չին վերցրել յետոյ, շատ յաճախ գոյնգոյն ներկերով են ծածկվում, նա ժպտաց: Մի րօպէի չափ լուռ մնալուց յետոյ արտասանեց. «Ես կուզէի, որ գերեզմանին վրա դրած լինէր պարզ ժայռի կտոր և նրա վրա կարգապէս լուր ազգանունս»:

Նրա այդ անմոռ ցանկութիւնը անսասնաբար կատարված է: Տաս տարվայ գերեզմանի վրա բարձրանում է այժմ ժայռի միակողմանի մի խոշոր կտոր իր բնական դրութեան մէջ: Այդ կոպիտ քարի կրծքի վրա մի փղբրիկ տարածութիւնը մաքուր յղկած է, ուր երևում է ոսկեգոծ տառերով հանգուցեալի ֆաբրիկէն «Գրիգոր Արծրունի»:

Գ. Նալբանդեան

ՄՏԳԻ ՆԱՆՍԱՍՅԱՆԵՐ

Հինգերորդ դարում հայոց նորագոյց դարձողների ունեւորեց առաջադէմները իրանց ուսուցիչներին ձեռքով ուղարկելով: Երբ արտասանեցինք ուսման կենտրոնակայանը—Եղեռնի, Բիւզանդիոն, Աթէնք, Ալեքսանդրիա, որպէս զի բարձրագոյն ուսում ստանան և հայրենիք վերադառնալով թարգմանութեամբ, գրական ուրիշ աշխատանքներով զբաղվեն, հոգեւորական դասնան, քարոզներ, վերջապէս Հայաստանի մոտաւոր անթիւ կարիքներին օգնեն: Այս անդրանիկ հայ ուսանողութիւնից մի մասը վերադարձաւ հայրենիք՝ դեռ երկու մեծ լուսաւորիչներ, Սահակ կաթողիկոսի ու Մեսրոպ Մայիսեցիի կենդանութեան ժամանակ և կենսւոյն ու գրականութեան մէջ անմոռանալի անուր թողեց (Վեոդ երեց, Յովսէփ կաթողիկոս, Եղեռնի, Կորիւն և այլն): Ուրիշ բախտ էր վիճակված նրանց աւելի կրտսեր ընկերներին, որոնք հինգերորդ դարի երկրորդ կէսում դառնում էին Յուստասանից հայրենիք՝ իր ու գեորդութեամբ, գործելու տնայով, գիտութեան հարուստ պաշարով: Քաղաքակրթված Յուստասանում երկու տարիներ մնալով, մեծ տեղի կենսւոյն ու գաղափարներին ընտելանալով՝ նրանք, այժմեան խօսքով ասելով՝ եւրոպականացած, գալիս ընկնում էին արեւելի խաւարի, նահապետական անշարժ

անցկացնէր Թիֆլիսում: Այդ ժամանակ նա ինքը յափշտակված էր Պարիզի ցուցահանդէսը գնալու մտքով: Բայց զենեքայ Արծրունու որդու համար այժմ այլ ևս չէր գոնէ մի մասով արտասահման գնալը: Նա միջոց չուէր...

Երբեք չեմ մոռանայ այն խօսքերը, որ նա ասաց ինձ. «Գիտեմ որ երբ մեռնեմ, պատկներ պիտի դնեն վրաս, աւելի լաւ կը լինէր, որ դրանց փոխարէն այժմ ինձ միջոց տային ցուցահանդէս գնալու և մամուլի միջազգային կոնգրեսին մասնակցելու»:

Այժմ, այս անշուք դիակի մօտ կանգնած, ես յիշեցի այդ խօսքերը: Գիտէր Արծրունին, նա էր, որ արտասանեց կրտսերական այն ֆրազը թէ շնչերը իրանց գործիչներին միայն թաղել գիտեն»:

Այժմ, գեղեմներեան այս ցուրտ օրերին, կատարվում էր նրա խօսքը: Հայոց ազգը թաղում էր Արծրունուն:

Իմ ծանօթ բժիշկներից մէկը, որ նոր էր եկել Թիֆլիս, «փոս» էր անուանում Արծրունու բնակարանը. խեղդված, նեղ, թարմ օդից զուրկ բնակարանին միայն այդ անունը կարելի էր տալ: Այդպիսի տեղում կորոյ էր բժշկութիւնը տնոյ լինել, հարցնում էր այդ բժիշկը: Նոյն իսկ բժշկագետ Գասպարեանը, չը նայած իր ամբողջ եռանդին, իր մեծ ջանքերին, անկարող եղաւ ազատել մահից իր մտերիմ բարեկամին...

Արծրունին չէր կարող մտածել փոքր ինչ լաւ բնակարանի մասին, նա, որ մեծացել էր իր հօր պալատամասն տնեւում: Նրա տնեւանքն էր ունենալ մի օր 1500 բաժանորդ և այն ժամանակ մի փոքր ի շատէ լաւ տուն վարձել խմբագրութեան համար: Բայց այդ տնեւանքը երբեք չը կատարվեց:

կենսւոյ, նախապաշարմունքների աշխարհը, և իրանց երիտասարդութեան ամբողջ թափով ու եռանդով ձեռնարկում էին գործի—քարոզչութեան, լուսաւորչութեան խաւար մտքերը, վերադառնալու հայեացքները, պատուաւորութեան իր նոր ուղիղ և օգտակար գաղափարները:

Սակայն նրանց այս լուսաւորիչ գործունէութիւնը սկզբից ևեթ ընդհարվեց մի մեծ խոչընդոտի, որ հէնց իրանք կարծես ստեղծեցին ժողովրդի և հոգեւորականութեան այն խաւերը, որոնց լուսաւորութեան համար էին յատկապէս աշխատում երիտասարդ ոյժերը՝ ոչ միայն ընդունեցին նրանց, ոչ միայն արտաժարեցին, այլ մինչև իսկ հալածանքի, բռնութիւնների և սպանութեան դիմեցին՝ նրանցից ազատվելու համար: Նրանց վրա բարդում էին անլուր մեղադրանքներ—նրանք տղէտ են, նրանք աղանդաւոր են, նրանք պոռնիկութիւն մեղք չեն համարում, նրանք խօսել չը գիտեն, նրանք անտանկ վարել տէր են և այլն: Նրանց դէմ գրգռում էին ժամանակի իշխանաւորներին, կամ հէնց իրանք ուղղակի ներս էին խուժում նրանց բնակարանը, կողոպտում գրքերը և գրքերը և նրանց դուրս քշում: Այն աստիճանին էր հասել նրանց ատելութիւնը «թարգմանիչներին» դէմ—(այսպէս էին կոչվում—որ տասնամյակում ուսած երիտասարդները)—որ դեռ հայրենիքի հողը ոտը չը դրած՝ նրանք դէմ կատարի զայրոյթ էին ժայթքում և իրանց սպառնալիքներով թոյլ չէին տալիս հայրենի երկրը դառնալ: Կայ վկայութիւն, որ մինչև իսկ մէկի ոսկորները գերեզմանից հանել և ջուրն են ածել, մի ուրիշի հետ էլ, որ վաղուց մեռած էր՝ դեռ ողորում էին անհայտութեամբ: Այսպիսի նահապետների մի շարք յիշում է Ղազար Փարպեցին, որ ինքն էլ մէկն էր թարգմանիչներից և ենթարկվել էր զանազան հալածանքների և մեղադրանքների: Բարեբախտաբար ասեմք թէ դժբախտաբար, նրա պատմութեան այս տեղում երկու թուղթ կորել է, որով մի քանի նոր նահապետների անտանկութեան հալածանքներ անձնօթ են մնում մեզ:

Բայց ինչու ենք այս հին բաները յիշեցնում այսօր, Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակին նուիրված «Մշակի» համարում—Որովհետև «Երեկ» կրկնվում է միշտ այսօր», որովհետև Գրիգոր Արծրունին էլ նոյնպիսի մեղքի նահապետ և եղաւ մեր մէջ տասնիններորդ դարի երկրորդ կէսին՝ ինչպէս որ էին հինգերորդ դարի երկրորդ կէսին Մովսէս Փիլիսոփոսը (Խորենացին), Ղազար Փարպեցին, Խորենացին (Խորենացին), Աբրահամ եպիսկոպոսը, և այլն: Նոյնպէս եւրոպականացած, լուսաւորված, գործելու, ուղղելու եռանդով ի՞նչ նա մտաւ մեր խաւար աշխարհը. սկսեց գործել, քարոզել: Նոյնպէս նրա դէմ զինվեց հակաուսկորներ խաւար բանակ. սկսեց հայտնել, մեղադրել:

Եւ այսօր հայ ազգը թաղում էր նրան: Պրասակներ էին թափվում ամեն կողմից: Դրանց թիւը մեծանում էր ժամերով, հարիւր, երկու հարիւր, հասաւ մինչև երեք հարիւրի: Ասում էին, թէ Թիֆլիսի մագաղանները այլ ևս չեն կարողանում կատարել պատուէրները: Հրատարակական ընկերութեան դահլիճում այլ ևս տեղ չը կար պատկները դնելու: տեղ չը կար և խմբագրատան մէջ...

Ամեն օր երկուցեան հոգեհանգիստ էր կատարվում: Պէտք էր այդ ժամանակ տեսնել ժողովուրդը: Խմբագրատան փողոցը, Կորիւնի դուռ, երկու սենեակները լցվում էին մարդկանցով: Բայց ի՞նչ լցվել: Ճիշդ որ ասեղ գցելու տեղ չը կար Սահաւորին էր ձեռքով այդ խաղաղ, միապաղաղ գնալու: Դարձած ամբողջ Յիշում եմ, մի երկու հոգեհանգիստին ներկայ էր ցնդողական կոմիտէի ամբողջ կազմը: Վերջացաւ հոգեհանգիստը, բայց անկարելի եղաւ ձանապարհ բաց անել գոնէ կոմիտէի նախագահի համար: Բոլոր խնդիրները զուր անցան: Խոչընդած ամբողջ չէր շարժվում և նախագահը ստիպված եղաւ բալի մուտքով գնալ:

Երբեք և մի այլ արտառուչ ցոյց, մի օր խմբագրատանը հոգեհանգիստ կատարեցին Թիֆլիսի հրէաները. նրանց աղօթքի թանձր ձայնը շատ թախմալի տպաւորութիւն թողեց մեզ վրա: Թուրքերն էլ մասնակցեցին մեր վշտին: Այս մարդը միայն հայերին չէր պատկանում. մնալով հայ և լաւ հայ, նա հաւատարմապէս սիրելի էր և մեր հարեան ազգուրթիւնների համար, սիրելի իր գրչով, իր լուսաւոր, գեղեցիկ գաղափարներով...

Այսպէս մի ամբողջ շարքով «Մշակի» խմբագրութիւնը անկաստես էր անօրինակ, չը տեսնված ցոյցերի: Եւ փոքրիկ դահլիճում դա-

նալածել, ինչպէս այն ժամանակ եւ ինչպէս նրա նախատիւները, Խորենացին, Փարպեցին և ընկերները, ապագայում դարձան հայ ժողովրդի տօնիկ որդիներն ու պարծանքը, նոյնպէս Գր. Արծրունին դարձաւ ներկայումս հայ ժողովրդի պանծալի որդին, նրա մեծ ջննապատը, նրա առաջ նոր ուղի հարթողը զէպի լոյս, զէպի մարդկայնութիւն և առաջադիմութիւն:

Շատ ուսանելի բան կայ գործիչի համար՝ երկվան և այսօրվան, հնի և նորի, անշարժութեան և առաջխաղացութեան այս դարաւոր, միշտ կրկնվող ընդհարում: մէջ, Հինը, անշարժութիւնը՝ սովորութիւնն է, աւանդութիւնն է, որոնց ընտելանում է հասարակութիւնը և որոնց մէջ նա կը մնար ու կը նեխվէր՝ եթէ արտաքին մի հոսանք, մի բուռն զօրութիւն չը ցնէր այդ հասարակութիւնը ջննադատութեան ոյժով: Ճնշումը ուղի է գալիս թմբած հասարակութիւնը, և նրա առաջին զգացումը լինում է դժգոհութիւն իր սովորական կենսւոյն ու հայեացքների խանգարողի դէմ, ինչպէս խոր քնած մարդը առաջին րօպէին շարանում է իրան զարթեցնողի վրա: Բայց ցնցումը կրկնվում է ուժգին և ուժգին. դժգոհութիւնը սաստկանում է աւելի և աւելի. սկսվում է մի կռիւ, անհաւասար կռիւ. բերաւորների տարերական, ճնշող ոյժը մի կողմից, ճշմարտութեան ու օգտակարութեան գիտակցութեամբ լրված անհատը միւս կողմից: Այդ կռիւն՝ արդէն մի փոքր յաղթանակ է անհատի համար. նա արդէն շարժեց ինչոր (անշարժ) հասարակութիւնը իր քնափութիւնից: Բայց նա շարունակում է կռուել, ձգտում է կատարելալ յաղթանակի, շատ նուաճումներ է անում, շատ տեղ խրամաններ է փորում հնութեան, անշարժութեան նուիրական պատուաւորների տակ, մինչև վերջապէս հնչում է և իր ժամը: Նա լրջում է կռուել ասպարէզը իր յաղթանակին և հետևում է կռուել, ձգտում է կատարելալ յաղթանակի: Կռուել, ձգտում է կռուել, որ աշխիւ գործիչ ստանում է ժամանակակիցներից իբրեւ արհամարհանք ու տանջանք, բայց որ յետոյ ամենապատուաւոր ու նուիրական նշանն է դառնում, և նրա առաջ նրան հալածողների յետագայ սերունդները խոնարհեցնում են իրանց գլուխները:

Ստ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Հանգուցեալ Գրիգոր Արծրունու թղթերի մէջ մենք գտանք նրա երկու անտիպ սևագրութիւնները, որոնք թատրոնական գրուածքի ձև ունեն: Տարաբախտաբար, այդ գործերից ոչ մէկն էլ վերջացած չէ: Բայց և այդպէս, մենք պարտք ենք համարում հանգուցեալ հրապարակախօսի գրի տակից դուրս եկած այդ պատգամը:

Գաղի մէջ դրած հրապարակախօսը տարող Թիֆլիսի, ամբողջ հայ հասարակութեան սրբութիւնն էր դարձել...

Բայց գա դեռ նախերգանքն էր:

III

Դեկտեմբերի 27-ը մի ամպամած, խոնավ օր էր: Վաղ առաւօտից ձիւն էր տեղում, որ արդէն բաւական հաստ չերտ էր կապել գետնի վրա:

Ժամի իննին մենք խմբագրատանն էինք: Վճռված էր, որ տանը կարգ կատարելիս միայն «Մշակի» աշխատակիցները ներկայ լինեն: Կատարվեց այդ կարգը, քահանաները դուրս գնացին, վերջին անգամ մօտեցանք մեր ուսուցչի ձեռքին: Ապա դուրս բերինք դադարը փողոց, ուր նրան սպասում էր մի անթիւ բազմութիւն, որ լցրել էր երկու փողոցները ծայրէծայր: Անուանեան այդ օրը, մինչև գերեզմանի ավեր, դադարը այդ բազմութեան սեփականութիւն դարձաւ և ամբողջ ժամանակ տանվում էր գլուխների վրա:

Աւելի մեծ էր բազմութիւնը Վանքի եկեղեցու բակում: Շարժվելը սաստիկ դժուար էր, բայց ինձ աշողվեց մտնել եկեղեցին: Այդտեղ էլ նոյնը, այդտեղ էլ ասեղ գցելու տեղ չը կար Պատարագի Գառնակերեան եպիսկոպոսը, որ յատկապէս ուղարկված էր Էլմիածնից, մի քանի խօսք ասաց: Ապա սկսեց խօսել այժմ հանգուցեալ Սարգիս քահանայ Բլկնազարեանը, Հոռոտական մեծ ընդունակութեամբ չուէր նա, բայց խօսում էր սրտի խորքից, խօսում էր պարզ և նրա իւրաքանչիւր խօսքը զգացմունք էր: Մի կարճ միջոցում այդ անարուեստ, բայց վերին աստիճանի արտառուչ խօսքը նուաճեց ամբողջ եկեղեցին, թագաւորում էր գերեզմանային լուռութիւն: Իսկ ճառախօսը գնալով աւելի և աւելի խո-

Электротечная Груз. Издат. Т—ва, Б.-Ванская ул.

Գ Ի Ե
Եթէ ն
Խ ա
ընկնեն
րելիս,
ինչ որ
երբ ն